

Հրեայի որդին

(շարունակություն)

Արդեն մեկ ամիս էր անցել, իսկ Տիգրանը հրեայի որդուն չէր վերադարձնում, և հրեան ստիպված ինքը եկավ նրան տեսնելու: Տիգրանը երդվելով ասաց.
— Քո տղան արդեն չորս շաբաթ է, ինչ կապիկ է դարձել: Ամեն օր աղոթում եմ, աղոթում, բայց բան դուրս չի գալիս: Գնանք, տես, դու էլ համոզվիր և աղոթիր, գուցե Աստված ծայրը լիի:



Հրեան ահաբեկված և վախեցած մերս է մտնում թե չէ, կապիկը վազում, գիրկն է ընկնում, սկսում պաշարել նրան, հրեան քիչ է մնում ուշաբափվի: Մի կերպ պոկվում է կապիկի գրկից ու մինչև տուն վազում կիսախեղագար ու ողբալով պատմում կնոջը: Կինը, որ ավելի խելացի էր, առաջարկում է ամուսնուն ոսկին հետ վերադարձնել, բայց հրեան չի լսում ու դատի է տալիս: Դատարանի դահլիճը լեփ-լեցուն է լինում ժողովրդով: Ներկա են լինում նաև Հակոբ Պատվելիկ և թագավորը: Հրեային բերում են ու, որ անկյունում որ պահում են, կապիկը գտնում է նրան ու գիրկն ընկնում, պոկ չի գալիս: Այդ ժամանակ առաջ են գալիս Գագիկ թագավորն ու նրա խորհրդատուն և ասում.



— Մենք ևս այդ հրաշագործությանը ներկա ենք եղել, որը միայն Աստված կարող էր անել: Դա քո որդին է, կարող ես տանել տուն և աղաչել Աստծուն, որ քո հանցանքի համար որդուդ ազատի պատճից:

Հրեան արցունքով և մագերթ փետելով հեռանում է դատարանից, իսկ Տիգրանը կապիկին իր հետ առած տուն է վերադառնում:

Հրեայի տունը մեծ պատերազմ է ընկնում: Կինը ասում է, թե այ անգութ, ազահ, զնա տակառը աղից ազատիր և ոսկի լցրու տեղը, որ իրենց տղան վերադառնա:

Վերջապես ամբարտապան հրեան տեղի է տալիս կնոջ թախանձանքին ու տակառի պարունակությունը դարձնում է ոսկի, ապա կառքը կանգնեցնում Տիգրանի դռանը և ասում.

— Ո՛վ հավատացյալ, ես իմ սխալը ուղղում եմ, դու էլ քո սխալը ուղղիր: Ես աղոթել ու Աստծուն ներողություն եմ խնդրել:

— Ո՛վ հրեա, մինչև դու անագնիվ գործերիդ համար պատիժ չկրեցիր ու չվերականգնեցիր արդարությունը, ոսկին ոսկի դարձավ ու որդիդ՝ մարդ: Թող դա դաս լինի քեզ նմաններին, որ Աստված ամենատես ու արդարադատ է: Չղջան ու ազնվությունը պաշտեն:

Այդ օրվանից հրեան Աստվածավախ դարձավ, Տիգրանը՝ զգուշավոր, իսկ Պատվելիկ՝ ավելի իմաստուն: Հրանտ Սարգսյան

Սուրբ Թադեոս և Բարդուղիմեոս առաքյալներ

19 դար շարունակ (որոնցից 17-ը՝ պաշտոնապես) Հայաստանում ամեն տարի տոնվել է Քրիստոսի սուրբ աշակերտների՝ ս. Թադեոս և ս. Բարդուղիմեոս առաքյալների հիշատակության օրը: Այս ամենուրեք մարդիկ հանուն հավատի նահատակվեցին օտար երկրում, օտար մարդկանց մեջ: Նրանք հոժարությամբ ընդունեցին մահը՝ այն վստահությամբ, որ հարթում են մի ամբողջ ժողովրդի փրկության ճանապարհը:

Սրբությունը պարզ էր Տիրոջից, որն օգնեց նրանց արիությանը և հաստատակամությամբ իրականացնելու իրենց առաքելությունը: Քրիստոսի աշակերտները սուսկալի մահը նախընտրեցին դավաճանությունից: Այս ինքնագոհությունը կյանքի որոշակի պահերին խորթ չէ նաև մեզանից յուրաքանչյուրին, որովհետև բոլորս էլ մեր բնական ինքնագոհությունը և կյանքի փորձառությանը գիտենք, որ մահը միայն մեկ անգամ է սպանում, մինչև դավաճանությունը սպանում է այնքան ժամանակ, քանի դեռ կենդանի է հուսախաբ ու ինքնադավ հոգին: Մեր աստվածատուր ինքնությունը միշտ էլ ձգտում է դեպի առաքինություն ու սրբություն, սակայն սրբանալ հաջողվում է միայն նրանց, ովքեր ժայռակործան կամք են գործադրում՝ իրենց աստվածային առաքելությունն իրականացնելու ճանապարհին:

Քրիստոսի աշակերտներին սրբությունը տրվել էր նախքան նրանց առաքելությունը, սակայն դա նրանք հասկացան, երբ «Նա հարություն առավ»: Այս դեպքից հետո առաքյալների համար կյանքն ու մահն արժևորվում էին Աստծո փառքի առավելությունը (հմտ. Փիլիպ. Ա 20, Ա Կորնթ. Ժ 31): Նրանց վրա էր ընկել հարության գործադրող ցուքը, որի աղբյուրը Քրիստոսի Փառքի լույսն էր՝ «լի շնորհով և ճշմարտությամբ» (Հովհ. Ա 14):

Այսուհետև առաքյալներին պիտի շարժեին աներեր սերն ու հավատը, սեփական կամքի կատարյալ համաձայնությունը Քրիստոսի կամքին:

Հարկավոր էր Աստծո խոսքը քարոզել ամբողջ աշխարհում. սա էր Ամենաբարձրյալի կամքը:

Նրանցից ոմանք ուրախ լուր էին բերելու նաև Հայաստան՝ երկիր, որտեղ դարեր հետո իջնելու էր Աստծո Միածին Որդին՝ նրանց սիրելի Ուսուսիչը:

Թեև առաքյալների մասին կենսագրական նյութերը չափազանց հակիրճ են, մի շարք մանրամասներ մնում են չպարզաբանված և շատ փաստեր էլ բաց են թողնված, այնուամենայնիվ մեզ հասած պատմագրական ժառանգության մեջ ուրվագծվում են նրանց առիքնող կերպարները:

Հետաքրքրական են Մ. Խորենացու հաղորդած տեղեկությունները: Ըստ նրա՝ Հայոց Աբգար թագավորը նամակ է ուղարկում Հիսուս Քրիստոսին՝ բժշկություն խնդրելով Նրանից: Տերը խոստանում է օգնել: «Երբ համբառնամ, քեզ մոտ

կուղարկեմ իմ աշակերտներից մեկին, որ քո ցավերը բժշկի և կյանք շնորհի քեզ հետ եղողներին» (Մ. Խորենացի):

Հիսուսի մահից և հարությունից անմիջապես հետո՝ 34-35 թթ., Տիրոջ խոստմանը հավատարիմ՝ թո՛ղմաս առաքյալը Թադեոսին ուղարկում է Եդեսիա, որտեղ նա բժշկում է Աբգարին և բազում հրաշքներ գործում:

Հրաշքները կատարվում են, որպեսզի մարդիկ հավատան և կամ հաստատվեն իրենց հավատի մեջ, սակայն իրականում հավատն է հրաշք ծնում և ոչ թե հրաշքը՝ հավատ: Եվ թեև սա կարևոր է, բայց առավել կարևոր է այն, որ առաքյալը «ոչ ոքի բռնությամբ չէր դարձնում հավատի, բայց հավատացյալներն օր օրի վրա ավելանում էին» (Մ. Խորենացի), քանզի նրա լծակից եղբոր բառերով. «Իրենց քարոտությունն իմաստության ճարտար խոսքերով չէր, այլ Սուրբ Հոգու համոզիչ գործությամբ, որպեսզի մեր հավատը չլիներ մարդկանց իմաստությամբ, այլ Աստծո գործությամբ» (հմտ. Ա Կորնթ. Բ 5):

Երբ մարդու մեջ Աստծո գործությունն է գործում, մարդն անսահմանորեն հզորանում է՝ ընդունակ դառնալով աստվածանալու: Մարդն ավելին է, քան հրաշագործը, երբ Աստծո Հոգին է գործակից նրան:

Այս դեպքերից հետո Հիսուս Քրիստոսի՝ Աստծո Միածին Որդու հավատքի սերմերն առաջին անգամ ցանվում են հայ հոգու անդաստաններում. թե՛ արքան և թե՛ նրա ենթականերից շատերը հավատում և մկրտվում են... Իսկ Թադեոս առաքյալը, մետաքսագործ և կույր կարող Ադդեիս (Ադայիս) Եդեսիայի եպիսկոպոս ձեռնադրելով, շարունակում է իր քարոզչությունը: Նրա կյանքն ավարտվում է մարտիրոսական մահով: 44 թվականին՝ Հայոց Սանատրուկ արքայի դուստր Սանդուխտ կույսի ու այլ հազարավոր նորադարձ քրիստոնյաների նահատակությունից հետո, առաքյալի նահատակում են Արտագ գավառի Եավարշան (Մակու) գյուղաքաղաքում, որտեղ երկնքից լույս է ճառագայթում, ճեղքվում է մերձակա ժայռը և իր մեջ ընդունում առաքյալի դին: Այստեղից աշակերտները նրա մարմինը վերցնում ու թաղում են դաշտում: Հետագայում առաքյալի մասունքները տեղափոխում են Վանա լճի հյուսիսարևելյան կողմը: Այստեղ՝ գերեզմանի վրա, նրա ամուսնով կառուցվում է մի գեղեցիկ եկեղեցի, որը, բարեբախտաբար, կանգուն է մինչև այսօր:

Ավետարանից հայտնի է, որ բացի Թադեոս անունից (Մարկ. Գ 18) առաքյալն ունեցել է նաև այլ անուններ, որոնք են՝ Հուդա (Դուկ. 2 16, Գործք Ա 13) և Ղեթնու (Մատթ. Ժ 3):

Հովհաննեսի Ավետարանում (ԺՂ 22) նա հարցնում է Հիսուսին. «Տե՛ր, ինչպե՞ս եղավ, որ Քեզ պիտի հայտնես մեզ և ոչ թե աշխարհին»:

Հիսուսը պատասխանում է. «Եթե մեկը սիրում է Ինձ, Իմ խոսքը կպահի, և Իմ Հայրը

Ավելի մեծ սեր չկա, քան այն, երբ մեկն իր կյանքն է տալիս իր բարեկամների համար: Դուք Իմ բարեկամն եք, եթե անեք այն, ինչ ես ձեզ պատվիրում եմ: Հովհ. ԺԵ 13-14

նրան կսիրի, և Մենք նրա մոտ կգնանք ու նրա մոտ կօթևանենք» (Հովհ. ԺՂ 23):

Թերևս պատահական չէ, որ այս պատասխանը հենց Թադեոս առաքյալին տրվեց, ում վիճակված էր քարոզել դառն ապագա ունեցող մի ժողովրդի մեջ:

Եվ իրապես, այս խոսքերը Հայաստանի համար վերստին բացահայտվում են 2000 տարիներ հետո: Մենք այսօր էլ փորձում ենք միխտարություն և ուժ գտնել մեր դժվարություններ ու նեղությունները հաղթահարելու համար: Սակայն, չգիտես ինչու, փնտրում ենք, բայց չենք գտնում: Ո՛րն է սրա պատճառը, և ինչպե՞ս է, որ մինչև իմ անց կարողանում ուղղել մեր կորացած մեջքը:

Հավանաբար սրա պատճառն այն է, որ մեզանից շատերը «Աստծո շնորհը վերածեցին անառակության և ուրացան մեր միակ Իշխանին և Տիրոջը՝ Հիսուս Քրիստոսին» (Հուդա Ա 4)՝ դառնալով դժգոհ ու բողոքավոր: Չլինի այնպես, որ մենք (ինքներս մեզ մոլորեցնելով) մշտապես մեղավորներ փնտրենք և զբաղվենք միայն չարախոսությամբ ու դժգոհությամբ, որովհետև ովքե՞ր են մեզ մոլորեցնողները, եթե ոչ «տրտնեցողներն ու բանսարկուները, որոնք հետամուտ են իրենց սեփական ցանկություններին. Նրանց բերաններն ամբարտապան խոսքեր են բարբառում, իսկ իրենք երեսպաշտություն են անում իրենց շահի համար» (Հուդա Ա 16):

Հայ եկեղեցին միասին է տոնում Ս. Թադեոս և Ս. Բարդուղիմեոս առաքյալների՝ իբրև հայոց աշխարհի առաջին լուսավորիչների, հիշատակության օրը, քանզի նրանց անբախտելիորեն միավորում է այն աստվածային լույս հավատը, որ մշտապես ճառագայում է մեր Տեր Հիսուս Քրիստոսից:

Մեծ է առաքյալների ծառայությունը մեր ժողովրդի կյանքում, քանզի դարեր առաջ նրանց ցանած հավատի սերմերն աճեցին և այնպիսի պտուղներ տվեցին, որ 301 թ. Հայաստանը քրիստոնեություն է իբրև պետական կրոն առաջին ընդունեց: 1700 տարի է, ինչ մենք պաշտոնապես խոստովանել ենք, որ որդիներ ենք Միայն Աստծո:

Ուրեմն, սիրելիներ՛, թող ամենտությունն ու երախտամոռությունը պատճառ չդառնան մեր հավատի կորստյան: Եկե՛ք չկորցնենք այն՝ տարածաշրջաններում գայթակղվելու պատճառով, որովհետև առաքյալները մեր անմահ հոգիներում սերմանել են հավատ և միաբանել մեզ այդ հավատով:

«Ձորությունների՝ Աստված, մեզ հետ դարձրու, ցույց տուր մեզ երեսը Քո, որ ապրենք...»

Եվ խնամի՛ր այն, որը տնկեց Աջը Քո, որին Դու գորացրիր Քեզանով... Ձորությունների՝ Տեր Աստված, մեզ հետ դարձրու, ցույց տուր մեզ երեսը Քո, որ ապրենք» (Սաղմ. ԴՅ 8, 16: 20):

Օրհնությամբ՝ Տեր Անանիա քն Բաբայան

«Ճանաչել Կիմաստություն և Կիրատ, իմանալ Կրանս հանձարոյ»
Սովորե՛ք Հայերեն **Учите армянский!**
Խոսե՛ք Հայերեն **Говорите по-армянски!**
Խորհե՛ք Հայերեն **Думайте по-армянски!**
Ապրե՛ք Հայերեն **Живите по-армянски!**

Наиболее употребительные слова и выражения. Русский текст, литературный текст и диалект

- Прогуливаться – эбосанки гнал – фолта анэл
- Проснуться – артнанал – аймиш ылар
- Прошлый год – анцял тари – пэру, анцац дари
- Прятаться – паһвэл – боходвэл
- Пустой – датарк – бараб (басбараб)
- Пусть будет – тох лини – толла
- Прямой – ухих – шидаг
- Пятно – биц – лэкэ
- Раздавать, раздать – бажанэк – пай анэл
- Разменять (деньги) – манрэл – арвэл
- Разнообразный – тэсак-тэсак – чешит-чешит
- Разгружать – бэррнатапэл – барбэл
- Рано – канух – ганох
- Растеряться – шпотвэл – шамиш ылар
- Растить – бусцнэл, мэцацнэл – пыс-нэцнэл, мэцунэл

- Расход – цахс – хардж
- Расходиться – бажанвэл – бажнывэл
- Рассыхаться – чакчыкэл – хавшамыш ылар
- Редко – цанцарр – сирак
- Репутация – һамбав – варкы, ануны
- Рогатый – позавор – годошов
- Рослый – бардзраһасак – боев
- Руки за спиной – дээрркэры тикункум драц – цэрркэры ямбашидрац
- Рухнуть, рушиться – плчэл – жырчвэл
- Рядом – кохкин – мотиг, ковы
- Саженец – тнки – фидан
- Салазки – дээррнасаһнак – чана
- Свежий – тарм – тажа
- С другой стороны – мюс кохмиц – мэгал сэмтэн
- Середина – мэджтэх – оштан
- Сейчас – һима – шиных
- Сидеть на корточках – ппзац ныстэл ках – гугуз ныстэл
- Сзади – һэтэвиц – эдэвэн
- Сильный – ужгин, ужэх – ужов
- Склон – ланч – яр
- Скоро – шутов – мэкчимэн, шудов
- Скоропостижно – һанкарцакиорэн – патрр-кутурр

- Скрутить, скручивать – волорэл, кап-капэл – дзыррмыррэл
- Слегка – тэтэваки – холай гэг
- Следить – һэтэвэл – дэймиш анэл
- След простыл – анһэтацав – дырылысны гдир (дит бабан)
- Смеяться – цицахэл – хындал
- Смирный – һандарт – и ваш
- Сначала – скзбиц – арчины
- С мужьями – амусиннэри һэт – эриг-нэрун һэд
- Собирать – һавакэл – топ анэл
- Совсем, целиком – болоровин, амбох-джовин – алайи, сах
- С облегчением вздохнуть – тэтэвацац шыңчэл – ырпат нэфэс ар рнэл
- Согласиться, соглашаться – памад-зайнутян гал – пожар (хайл) ылар
- Согнуть – цррэл – джыгэл
- С одной стороны – мэк кохмиц – мэг сэмт эн
- Специальность – маснагитутюн – зэ-нипат
- Спокойный – һангист – ыррһат

Использован материал из книги А.Г. Малхасяна «Русско-армянский разговорник», Ростов-на-Дону, 2008г.